ւոր վիճակ կուսակալութեանն՝ ԽԱՐԲԵՐԴ 'ի ՀԱՆՁԻԹ գաւառի հնում, որ է դաշտ ընդարձակ պարապեալ 'ի լերանց և բարձր իբրև 2500'. քաղաքն ԽԱՐԲԵՐԴ կամ ԽԱՐԲՈՒԴ որ է Քարփութ ըստ Յունաց՝ կայ 'ի քարալերին իբր 4000' բարձու, և ունի բերդ հզօր, որ աթոռ է փաշայի կուսակալի գաւառաց բազմաց. 'ի սկիզբն ԺԲ դարու Պալակ բռնաւոր Թուրք 'ի գիպահոց ունէր 'ի բերդիս զՊալոին թագաւոր Երուսաղէմի և զՃօսլին կոմս Եդեսիոյ, զոր Հայք ոմանք զերծուցին: 1750 տունք են 'ի Խարբերդ, յորս 300 Հայոց. և 3000 ևս տունք նոցա յ'80 գիւղօրայս դաշտին Խարբերդու, յորում են և այլ նոյնքան գեօղք համակ տաճկաբնակք: Ձորք վանորայք են 'ի դաշտիս, մին Գոսլքու Ս. Գէորգ առ համանուն գիւղիւ 'ի հարաւոյ քաղաքին, յորում յամին 1839 գտաւ շիշ միւռոնի օրհնելոյ 'ի Ս. Ներսիսէ Շնորհալւոյ. Արդմէնիկ վանք առ Զարդարիչ գիւղիւ, Գաթէնոյ վանք առ համանուն գիւղիւ, յանուն Տիրամօր. և Սորսոր Ս. Գէորգ առ Հողի գիւղիւ. և գիւղօրայքն բաժանեալ են 'ի Թեմս առաջնորդաց սոցին: — Ի հարաւոյ Խարբերդու առ Եփրատաւ կան վիճակքն ԴԻԼԷՔ որ է ՏԼՈՒՔ կամ ՏԼՔՈՑ երկիր, և ՍԱՐԸ ՄԷՇԷ. ընդ մէջ որոց և Խարբերդու է Ծովք լիճ, որ և Ծովք Խարբերդու, այժմ Կէօլճիւկ կոչեցեալ բարձր 3300', իբր $3\frac{1}{2}$ ժամու ընդ երկայնն և ժամու լայն. և յարևմտեան մասին իւրում ունի զԾովք գիւղ, ուր նստէին Գրիգոր Պահլաւունի կաթողիկոս և եղբայր նորա Ս. Ներսէս Շնորհալի. և ապա չոգան 'ի Հռոմկլայն: Բայց կղզին աւանացեալ բնակեալ էր 'ի Հայոց, և յառաջ քան զամս սակաւս լքին զայն 'ի սպառ, վասն աճելոյ ջուրց լճին և ծածկելոյ զչէնս. և քակեալ զհին եկեղեցին Ս. Նշան՝ նոր կառուցին յեզր ծովակին, և ուխտիք պատուեն 'ի նմա խաչ մի զոր 'ի Թադէէ գործեալ ասեն:

## Դ. ՏԻԱՐՊԷՔԻՐ ՆԱՀԱՆԳ

68. Յելից վիճակացս և Խարբերդու ձգին լերինք աղխաղխեալք մինչև 'ի Մուրատ, ջրաբաժինք օժանդակաց նորա և Եփրատայ, և Տիգրիսի՝ որ 'ի հարաւոյ նորուն բղխէ. նոյն և անջրպետք նահանգին Խարբերդու՝ յարևմտից, և ՏԻԱՐՊԷՔԻՐ նահանգի՝ յարևելից, որ և քառակուսի իմն ձևով գրաւէ զկէս Ծոփաց նահանգի և զԱՂՁՆԻՍ հին. 'ի հարաւոյ սահման ունելով զՄիջագետս, զՈւռհա և զՄէրտին գաւառս, յարևելից զՄուշ, և 'ի հիւսիսոյ զՄուրատ գետ: Որոյ վիճակք են, 'ի հիւսիսոյ արևմտից՝ և 'ի հարաւոյ Մուրատայ և Բալուայ՝ ՍԻՎԱՆ-ՄԱՏԷՆ յորում երկաթահանք են 'ի բազմակոհակ լերինս. ուրանօր թուի լինել աւերակք ԱՐՇԱՄՈՒՇԱՏ քաղաքի. և հիւսիսային առաջք արևմտեան ականց ՏԻԳՐԻՍ գետոյ, զի 'ի նախնեաց մերոց բուն ակունք նորա ճանաչին 'ի Հաշտենից գաւառի յՈւր գեղջ (23). ուստի իջանեն գետակքն Լըճէ, Սիվան, Ամբէր և գործեն զԴիճլէ գետակ որ խոնարհագոյն Չէպէնէ կոչի և ապա Դիճլէ, յորմէ Դիճլա որ է Տիգրիս. խոկ գետն որ առ Կեօլճիւկ լճաւն բղխէ և խաղայ հարաւախառն յարևելս՝ կոչի Պաղէն-սու:

69. Ձայսու գետակաւ ձգի վիճակն ԱՐՂԱՆԱ որ և ԱՐՂՆԻ կամ ԱՐԿՆԻ, յորում քաղաքն համանուն կայ 'ի հարաւոյ կամ յաջմէ գետոյն, 'ի բարձու քարալերին իբր 2880', 'ի բարեզուարճ և արգաւանդ երկրի. ունելով տունս 1000, յորս 300 Հայոց. որոց առաջնորդարան է Բուրջահայէնց Աստուածածին վանք՝ յաստ մի երկճիւղ լերինն. 'ի միւսում գագաթանն կայ Զիւլքաֆլ ուխտատեղի Տաճկաց. և աշաւորահայեաց հին բերդն Արղնոյ, որում 'ի ԺԱ դարու տիրէին Հայկազունք ոմանք արք հսկայաձևք: — Ի հիւսիսոյ քաղաքին իբր չորս ժամուք վերագոյն կան բովքն ԱՐՂԱՆԱ կամ Քէօմիւր մատէն, բնակեալ յ'750 տանց, յորս 170 Հայոց, 300 Տաճկաց և այլք Յունաց գործաւորաց բովուցն ընդ վերակացութեամբ ոստիկանին Քէպան մատէնի: Գլխաւոր բովք պղնձահանից են 'ի լերին Մաղարա գեղջ, յորմէ հատանեն իբրև 18000 պատման պղինձ ամի ամի: — Ի հարաւոյ Արղնոյ ընդ մէջ Եփրատայ և Գըզըլճալդ օժանդակի նորին կան փոքր վիճակքն ՉԵՐՄԻԿ և ՇՆՔՈՒՇ և ԱՏԻՇ, յորս են և 600 տուն Հայք ընդ առանձին առաջնորդօք: — Յարևմտից սոցա յայնկոյս Եփրատայ յեզր նորին կայ անուանի և հզօր քարաբերդն Կարգառայ՝ Կէրկէր գալէսի կոչեցեալ, արտաքոյ Մեծին Հայոց, (տես 'ի Փ. Ասիա, Թիւ 1849) այլ սահմանապահ քաղաք Հայոց:

70. Յելից Արղանայ և Չէպէնէ գետոյ կայ վիճակն ԱԿԼ կամ ԷԿԻԼ որ է ԱՆԳԵՂՏՈՒՆ՝ հին երկիր Հայոց. որոյ և քաղաք համանուն կայ 'ի քարալերին ամուր բերդաւ, ուր պահիւր մասն գանձուց և գերեզմանաց Արշակունի թագաւորաց Հայոց. կան ցարդ աւեր և անաւեր շինուածք և ձեռագործ քարայրք 'ի նմա: Ի հիւսիսոյ նորա կայ Բիրան աւան. և 'ի նորին հիւսիսոյ Չէպէնէ գիւղ, յորմէ և գետոյն անուն: — Յելից հիւսիսոյ Ակլայ կայ ԴԻՐԻՔԻ երկիր, որ է ԴՈՎՐԷՔ գաւառ Դ Հայոց, յորում մանր և ամուր վիճակքն ԻԼԻՃԷ կամ ԼԸՃԷ, ԱԴԱԽ կամ Աթաք և ՀԱԶՐՈՅ կամ Խազրօ, և ՀԵՆԻ կամ Հանի, յորս միահամուռ ասին լինել աւելի քան 200 գիւղորայք ցրուեալք 'ի լերինս, շատք քրդաբնակք: Ի Հենի են 200 տունք Հայոց. 'ի Հազրու աւանի 150 տուն, 'ի Լըճէ աւելի քան զ'200:

71. Յելից վիճակացս կայ ՄԻՑԱՖԱՐՂԻՆ կամ ՄՈՒՖԱՐՂԻՆ այն է ՆՓՐԿԵՐՏ վիճակ մեծ, առ Պատման սու գետով օժանդակաւ Տիգրիսի, որ է Նիմֆէոս ըստ Յունաց. 'ի հնումն ՈՒԹԱ կամ ՈՏԱՑԵՑԻՈՑ երկիր կոչէր վիճակս, միջասահման Աղձնեաց և Ծոփաց. և յետնոյս մայրաքաղաք էր ՆՓՐԿԵՐՏ, ըստ աւանդութեան տեղացեաց շինեալ 'ի Նուֆարայ քեռէ Տիգրանայ Հայկազնոյ, և ՄԱՐՏԻՐՈՍԱՑ-ՔԱՂԱՔ կոչեցեալ 'ի Ե դարու, յորժամ Ս. Մարութա նորոգեալ զայն՝ ժողովեաց 'ի նմա նշխարս վկայից 300,000աց. որք յետ բազմապատիկ անցից քաղաքին՝ յառման նորա 'ի Հուլաղուն Ղանէ յամին 1260՝ ցրուեցան այսր և անդր: Են ցարդ 'ի նմա կիսաւեր եկեղեցիք և արձանագրութիւնք, այլ յոչ ումեքէ քննեալք: Դաշտն Նփրկեր-